ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ 134-24

2024 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 03-ԻՆ ԿՆՔՎԱԾ «ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՕՏԱՐՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ՄԱՍԻՆ» N166-24 ՊԱՅՄԱՆԱԳՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ք. Երևան **«26» հունիսի 2024թ.**

Հայաստանի Հանրապետությունը՝ ի դեմս Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարության, որի անունից հանդես է գալիս նախարար Գևորգ Պապոյանը (այսուհետ՝ Լիազոր մարմին), ով գործում է նախարարության կանոնադրության և ՀՀ Կառավարության 2023 թվականի սեպտեմբերի 7-ի N 1529-Ա որոշման հիման վրա, մի կողմից, և **«Համաշխարհային առևտրի կենտրոն Երևան» փակ բաժնետիրական ընկերությունը** (ՀՎՀՀ՝ 08279909, գրանցված 31.05.2024թ., գրանցման համարը՝ 264.120.1390913, գտնվելու վայր՝ Հայաստանի Հանրապետություն, ք. Երևան, Բաղրամյան պողոտա 2-րդ փակուղի 8 շենք, 41 ոչ բնակելի տարածք), ի դեմս Գլխավոր տնօրեն Արտաշես Տոնոյանի, ով գործում է Ձեռքբերողի կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Ձեռքբերող), մյուս կողմից (այսուհետ՝ առանձին՝ Կողմ, համատեղ՝ Կողմեր), հիմք ընդունելով 2024 թվականի հունիսի 03-ին կնքված «Սեփականության օտարման գործընթացի մասին» N 166-24 պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) 12.6-րդ կետը, կնքեցին սույն համաձայնագիրը (այսուհետ՝ Համաձայնագիր) հետևյալի մասին.

1. Համաձայնագրի առարկան

1.1. Պայմանագրի 1.10-րդ կետը «ժամանակահատվածով» բառից հետո լրացնել «, եթե տվյալ գույքի (գույքերի) հետ կապված վեճերն էական խոչընդոտ են հանդիսանում Քաղաքաշինական ծրագրի իրականացման համար» բառերով:

1.2. Պայմանագրի 8-րդ գլուխը հանել:

1.3. Պայմանագրի 12.3 կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«12.3. Կողմերի միջև փոխադարձ համաձայնություն կամ պայմանավորվածություն ձեռք չբերվելու դեպքում Պայմանագիրը կարող է վաղաժամկետ լուծվել դատական կարգով Ձեռքբերողի կողմից, եթե Լիազոր մարմնի կողմից թույլ է տրվել Պայմանագրի էական պայմանների խախտում:»:

1.4 Պայմանագրի 12.4 կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«12.4. Կողմերի միջև փոխադարձ համաձայնություն կամ պայմանավորվածություն ձեռք չբերվելու դեպքում Պայմանագիրը կարող է վաղաժամկետ լուծվել դատական կարգով Լիազոր մարմնի կողմից, եթե Ձեռքբերողը չի կատարում կամ սահմանված ժամկետում չի կատարում Պայմանագրի 1-ին գլխի 1.10 կետով սահմանված Քաղաքաշինական ծրագիրը կամ 4-րդ գլխի 4.1 կետով սահմանված պարտավորությունները կամ Ձեռքբերողի կողմից թույլ է տրվել Պայմանագրի էական պայմանների խախտում:»:

2. Այլ պայմաններ

2.1. Համաձայնագիրն ուժի մեջ է մտնում Պայմանագրի ուժի մեջ մտնելու պահից և հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը: Ընդ որում, Կողմերից յուրաքանչյուրն ընդունում է մյուս Կողմի իրավունքը՝ Համաձայնագրի կնքումն իրականացնել էլեկտրոնային թվային ստորագրության կիրառմամբ՝ համաձայն ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 296-րդ հոդվածի 3-րդ կետի կարգավորման: Այդ դեպքում, մի Կողմը պարտավոր է Համաձայնագրի՝ մյուս Կողմի ստորագրած ՓիԴիԷֆ (PDF) ֆորմատով էլեկտրոնային տարբերակի վրա դնել իր ստորագրությունը (այդ թվում՝ էլեկտրոնային թվային), և ստորագրված Համաձայնագիրը թղթային կամ էլեկտրոնային տարբերակով տրամադրել մյուս Կողմին:

2.2. Համաձայնագրում չնշված Կողմերի Պայմանագրով նախատեսված իրավունքները և պարտականությունները, Համաձայնագրով չփոփոխված Պայմանագրի մնացած բոլոր դրույթները մնում են անփոփոխ և պահպանում են իրենց ուժը:

2.3. Համաձայնագիրը կազմված է 2 (երկու) էջից, կնքված է 2 (երկու) օրինակից, որոնք ունեն հավասար իրավաբանական ուժ, յուրաքանչյուր Կողմին տրվում է Համաձայնագրի մեկական բնօրինակ:

3. Կողմերի ստորագրությունները.

ԼԻԱԶՈՐ ՄԱՐՄԻՆ	ՁԵՌՔԲԵՐՈՂ
Հայաստանի Հանրապետություն՝ ի դեմս Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարության	**«Համաշխարհային առևտրի կենտրոն Երևան» ՓԲԸ**
Գևորգ Պապոյան Նախարար	Արտաշես Տոնոյան Գլխավոր տնօրեն
_____	Digitally signed by TONOYAN ARTASHES 2112760221 Date: 2024.06.26 11:07:42 AMT _____